



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ



# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 59

**Ձեռնարկողը՝**

**<<ԹԱԹՍԹՈՈՒՆ>> ՍՊԸ**

*Ք. Երևան, Երզնկյան 79 տ.*

**Գործունեությունը՝**

**Լիճքի հանքավայրի տեղամասում 110կՎ բարձրավոլտ  
օդային գծի և ենթակայանի կառուցման շրջակա միջավայրի  
վրա ազդեցության գնահատման հաշվետվություն  
Սյունիքի մարզ**

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝**



**Վ. Սահակյան**

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 59

« 19 » 06 2018թ.

**Սյունիքի մարզի Լիճքի հանքավայրի տեղամասում 110 կՎ բարձրավոլտ  
օդային գծի և ենթակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության գնահատման հաշվետվություն**

Պատվիրատու՝	«Թաթաթուն» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Բ»
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ

Նախատեսվող գործունեությունը գտնվում է Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում:

Լիճքի պղնձի Հանքավայրի շահագործումը էներգատար գործունեություն է և պահանջում է էլեկտրական էներգիայի մատակարարման առանձին օդային գիծ: Ըստ ՀԷՑ ՓԲԸ տվյալների մոտակա միացման տեղամասը՝ 2.5կմ հեռավորության վրա անցնող 110կՎ օդային գիծն է:

Հանքավայրի անխափան էներգամատակարարումը ապահովելու համար ընկերությունը նախատեսում է կառուցել 2.5 կմ երկարությամբ օդային գիծ և հանքավայրի տարածքում ենթակայան՝ համապատասխան լարման տրանսֆորմացիա անելու համար:

Նախատեսվող 110կՎ օդային գծերի և ենթակայանի շինարարության տարածքում ծառեր չկան: Տեղում իրականացված դաշտային այցելություններով, ինչպես նաև առկա գրականական տվյալների համադրմամբ և նույնականացմամբ հաստատված է, որ այստեղ առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ կարմիր գրքում կամ ԲՊՄՄ կարմիր ցուցակում գրանցված բույսերի և կենդանիների տեսակները բացակայում են:

Բնության հատուկ պահպանվող տարածքներից նախատեսվող գործունեության հարևանությամբ գտնվում է միայն «Արևիք» ազգային պարկը, սակայն նախատեսվող 110 կՎ օդային գծերի և ենթակայանի շինարարության տարածքը չի հատվում ազգային պարկի տարածքի հետ, ամենամոտ կետը «Արևիք» ազգային պարկի սահմանից գտնվում է 150մ հեռավորության վրա:

Համաձայն ներկայացված հաշվետվության անմիջապես օդային գծի և ենթակայանի կառուցման տեղամասում և դրա մերձակայքում հուշարձաններ չկան:





Օդային գծի կառուցումը կպահանջի իրականացնել նոր ենթակայանի շինարարություն, տեղադրել նոր հենարաններ և դրանք միացնել 110 կՎ գործող օդային գծին:

Աշխատանքները կազմակերպվելու է հետևյալ սխեմայով՝

- կատարել հողային աշխատանքներ՝ փորելով հիմքերը,
- տեղադրել հենարանները,
- իրականացնել ենթակայանի շինարարությունը,
- անցկացնել լարերը, կատարել միացում:

Նոր օդային գծի հաշվարկային երկարությունը կկազմի 2.5կմ:

Աշխատանքների ընթացքում ծառահատումներ չեն նախատեսվում, մոտեցման ճանապարհները առկա են:

Ենթակայանի հարթակի համար կպահանջվի 50x50մ տարածք: Տարածքը նախատեսված է հանքավայրի արտադրական հանգույցի հարևանությամբ:

Օդային գծերի և ենթակայանի կառուցման համար իրականացվում է շինարարություն, որը ներառում է հողային աշխատանքներ, շինարարական տեխնիկայի շահագործում, նյութերի օգտագործում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո օդային գծերը գործարկվում են և շահագործման փուլում նույնպես առաջանում է որոշակի ճնշում շրջակա միջավայրի վրա:

Շինարարության հիմնական փուլը իրականացվում է մեխանիզացված համալիրով և ընդգրկում է՝

- գրունտների մշակում,
- գրունտների փխրեցում,
- շինարարական աշխատանքներ,
- մոնտաժային աշխատանքներ:

Բարձրավոլտ էլեկտրահաղորդման ՕԳ-ի և ենթակայանի շինարարության ժամանակ նկատվում է հողածածկի խախտում, տեղի է ունենում մթնոլորտային օդի աղտոտում շինարարական մեքենաների և մեխանիզմների աշխատանքից և փոշուց, առաջանում է աղմուկի լրացուցիչ ազդեցություն:

Բարձրավոլտ էլեկտրահաղորդման ՕԳ-ի շինարարությունը բացասական ազդեցություն է գործում շրջակա միջավայրի վրա: Այդ պատճառով շրջակա միջավայրի վրա անտրոպոգեն բացասական ազդեցության մեղմման և վերացման, բնական պաշարների ռացիոնալ օգտագործման համար շինարարության ընթացքում նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ:


Սակայն շինարարության բոլոր փուլերում շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա ազդեցությունը կրում է ժամանակավոր բնույթ և աշխատանքային հրահանգների ճիշտ պահպանման դեպքում հնարավոր է ազդեցությունը հասցնել նվազագույնի:

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը հիմնականում պայմանավորված է հողային զանգվածների տեղափոխումներով, շինարարական տեխնիկայի, ավտոտրանսպորտի շահագործման և այլ շինարարական աշխատանքներով:

ՕԳ և ենթակայանի շինարարության ընթացքում ջրամատակարարումը կատարվում է աշխատողներին խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, հողային ծանգվածը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար:

Խմելու ջուրը գործող արտադրական հրապարակ նախատեսվում է բերել Լիճք գյուղի համայնքային ջրացանցից՝ ավտոջրատար մեքենաներով կամ թերմոսներով, իսկ տեխնիկական ջուրը ջրցան ավտոմեքենայով:

Շինարարական աշխատանքների ընթացքում փորվում հանվում են գրունտեր: Ընդամենը հանված գրունտերի ծավալը կկազմի 2525խմ, որից 2323խմ օգտագործվում է որպես ետլիցք, 202խմ ավելցուկ հողն օգտագործվելու է ենթակայանի և հենասյուների



անմիջական մերձակայքում գտնվող տարածքների համահարթեցման և բարեկարգման համար, որի մակերեսը կկազմի 194.4մ<sup>2</sup>: Այս բոլոր տարածքները գտնվում են հանքավայրի լիցենզիոն տարածքում:

Շինարարությունն իրականացնող անձնակազմի կենսագործունեության արդյունքում առաջանում են կենցաղային թափոններ, որոնք հեռացվում են համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Ընդամենը կենցաղային թափոնների ծավալը կկազմի՝ 1480կգ:

Տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում աղմուկի մակարդակի ավելացման պատճառով որոշ կենդանիներ կհեռանան այդ տարածքներից, սակայն դա ունի ժամանակավոր բնույթ և հետագայում իրավիճակը կվերականգնվի:

Աշխատանքների տեղամասը գտնվում է <<Արևիք>> ազգային պարկի մոտակա տարածքներում: Նախատեսվող աշխատանքների բնույթը և վերը իրականացված հաշվարկները, ցույց են տալիս, որ օդային գծի և ենթակայանի ազդեցությունը չի տարածվի մինչև <<Արևիք>> ազգային պարկի տարածք, այդ թվում՝

- Արտանետումների փոքր քանակների պատճառով դրանք չեն հասնի պարկի տարածք,
- Ջրերի արտահոսք չի առաջանում,
- Աղմուկի մակարդակը մինչև 500մ հեռավորության վրա հասնում է մինչև բնակավայրերի համար թույլատրելի մակարդակի:

Համաձայն արտանետվող վտանգավոր նյութերի քանակների հաշվարկի, վնասակար նյութերի քանակները սահմանային թույլատրելի նորմերի սահմաններում են:

Հաշվետվությունում ներառված են նաև մշտադիտարկումների իրականացման ծրագիրը:

Լիճքի հանքավայրի ՕԳ և ենթակայանի շինարարության աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են ազդեցության նվազեցման միջոցառումներ:

## Եզրահանգում

Ներկայացված գնահատման հաշվետվությունով նախատեսված աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են ազդեցության նվազեցմանն ուղղված բավարար միջոցառումներ՝ մթնոլորտային օդի, հողային ռեսուրսների, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, արտակարգ իրավիճակների վերաբերյալ:

Այսպիսով իրականացվող աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

## Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջրերի որակի, քանակի, վիճակի, օդ, հող և այլն) մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

2. Առաջացած շինադրի (կենցաղային աղբի) հեռացումն անհրաժեշտ է իրականացնել << օրենսդրությամբ սահմանված կարգով:





3. Նախատեսվող աշխատանքներն իրականացնելու ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի պահանջներով:

4. «Արևիք» ազգային պարկի սահմաններում բացառել որևէ աշխատանքների իրականացումը:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Թաթարուն» ՍՊԸ կողմից ներկայացված Սյունիքի մարզի Լիճքի հանքավայրի տեղամասում 110 կՎ բարձրավոլտ օդային գծի և ենթակայանի կառուցման գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Զ. Զուռնայան